# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 օգոստոսի 2026 թվականի N 0599-Ա

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-065-0055-0035 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Մեխակ Մկրտչյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի 7-րդ փողոցի, 1-ին նրբանցքի 05-065-0055-0035 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Մեծ Մասրիկ բնակավայր, 7-րդ փողոց, 1-ին նրբանցք 6 բնակելի տուն հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. օգոստոսի 31
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 օգոստոսի 2026 թվականի N 0600-Ա

**ԽԱՆՈՒՄ ԲԱԴԱԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-008-0233-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Էմմա Վյաչեսլավի Սարգսյանի դիմումը՝ որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի 05-008-0233-0009 կադաստրային ծածկագրով հողամասը՝ Ակունք, [illegible]րեկամության փողոց, 6-րդ նրբանցք, 1-ին փակուղի 6 հասցեն վերահասցեավորել՝ Վարդենիս, Ակունք, Ա. Ջանիբեկյան փողոց, 1-ին փակուղի 6 բնակելի տուն հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. օգոստոսի 31
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2026 թվականի N 0601-Ա

## ՎԵՄԻՐ ՎԱՐԴԱՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏՋՐԵՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 10 ՀԱՍՑԵԻ 05-072-0008-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,1694 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով <<Թիվ 28 ՇՄՇ>> ԲԲԸ-ի կողմից 24.08.2026 թվականին տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և Վեմիր Վարդանի Մինասյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Շատջրեք բնակավայրի 1-ին փողոց, թիվ 10 հասցեի 05-072-0008-0005 կադաստրային ծածկագրով հողամասում 2017 թվականին ինքնակամ կառուցված բնակելի տուն՝ 64,10 քմ (ներքին մակերես՝ 52,50 քմ), Բ.Պ աստիճանահարթակ՝ 12,40 քմ մակերեսներով շինությունները (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026CSP25W) չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ճանաչել օրինական, որպես՝ Վեմիր Վարդանի Մինասյանի սեփականություն:

2. Օրինականացումը իրականացնել հետևյալ սահմանված գներով.

2.1 Բնակելի տուն՝ 64,10 քմ x 10000 x 0,0536 = 34400 ՀՀ դրամ

2.2 Բ.Պ աստիճանահարթակ՝ 12,40 քմ x 10000 x 0,0536 = 6650 ՀՀ դրամ

2.3 Ինքնակամ բացված դուռ, պատուհան 7 հատ x 10000 x 0,0536 = 3800 ՀՀ դրամ

Ընդամենը 44850 (քառասունչորս հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որը պետք է 60-օրյա ժամկետում մուծվի տեղական բյուջե (ինքնակամ շինության օրինականացման հաշվեհամար-900155101208):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. օգոստոսի 31
ք. Վարդենիս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 0602-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N [illegible]3-Ն հրամանը՝ **որոշում եմ.**

1.Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն հավելվածների:

2.Ուժը կորցրած ճանաչել Վարդենիս համայնքի ղեկավարի 07 մարտի 2025 թվականի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և Վարդենիս համայնքի ղեկավարի 01 օգոստոսի 2022 թվականի և 04 օգոստոսի 2022 թվականի <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> N 185-Ա և N 192-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 198-Ա որոշումը և հավելվածները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 01
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 0603-Ա

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՐՖԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՀԱՐՈՆ ԱՂԱԲԵԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐՎԱԾ 7,0 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով վարելահողի վարձակալ Ահարոն Խաչատրյանի և Վանևան համայնքի ղեկավարի միջև կնքված 25.05.2001թվականի պայմանագիրը և պայմանագրի 5-րդ պարբերության 16-րդ կետի պահանջները վարելահողի վարձակալ Ահարոն Խաչատրյանի դիմումը. 01.09.2026թվականի վարձակալության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշում եմ.

1.Վարելահողի վարձակալ Ահարոն Խաչատրյանի հետ 25.05.2001թվականին կնքված 7,0հա վարելահողի պայմանագրի ժամկետը երկարաձգել ևս 25 տարի սկսած 01.09.2026թ-ից մինչև 01.09.2051թվականը, վարձավճարի չափը թողնելով անփոփոխ:

2.Պայմանագրի հետ կապված գործառույթների կատարումը վերապահել աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնին .

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 01
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 սեպտեմբերի 2026 թվականի N 0604-Ա

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍԵԴՐԱԿ ԹԱԹՈՒԼԻ ՓՈՍՏՈՅԱՆԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐՎԱԾ 10,0 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՊԱՅՄԱՆԱԳՐ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով վարելահողի վարձակալ Սեդրակ Փոստոյանի 24.07.2026թվականի դիմումը. վարելահողի վարձակալությա ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշում եմ.

1.Վարելահողի վարձակալ Սեդրակ Փոստոյանի հետ կնքված 10,0հա վարելահողի պայմանագրի ժամկե երկարաձգել ևս 15 տարի սկսած 01.09.2026թ-ից մինչև 01.09.2041թվականը, վկայական N 00325 վարձավճարի չափը թողնելով անփոփոխ:

2.Պայմանագրի հետ կապված գործառույթների կատարումը վերապահել աշխատակազմի Գյուղատնտեսությա Բնապահպանության բաժնին .

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

26թ. սեպտեմբերի 01
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2026 թվականի N 0605-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-051-0023-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Օրբել Բեգլարի Վարդանյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի 8-րդ փողոց, 1-ին փակուղու 05-051-0023-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Ծովակ բնակավայր, 8-րդ փողոց, 1-ին փակուղի 6 հողամաս հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 02
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 սեպտեմբերի 2026 թվականի N 0606-Ա

### ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 1/1 ՀԱՍՑԵԻ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԵՎ ԲԱԺԱՆՎՈՂ ՀԱՏՎԱԾՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Լուսակունք բնակավայրի 12-րդ փողոց 1/1 հասցեի անշարժ գույքը, (սեփականության իրավունքի գրանցման վկայական N 26082026-05-0023 հաստատված 26 օգոստոս 2026 թվական)՝ համաձայն կից հատակագծի բաժանել և բաժանվող 0,14128 հա անշարժ գույքին տրամադրել Վարդենիս համայնք, Լուսակունք բնակավայր, 12-րդ փողոց 1/1 հողամաս հասցե, 0,110 հա անշարժ գույքին տրամադրել Վարդենիս համայնք, Լուսակունք բնակավայր, 12-րդ փողոց, 1/2 հողամաս հասցե:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 02
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

02 սեպտեմբերի 2026 թվականի N 0607-Ա

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 95 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 05-005-0238-0095) ԵՎ 97 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 05-005-0238-0096), ԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ 80 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 05-005-0238-0093) ԵՎ 82 (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 05-005-0238-0102) ՀԱՍՑԵՆԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 21/08/2026 թվականի N 02//7230-2026 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի 95 (անշարժ գույքի գրանցման N 12122025-05-0049 վկայական), Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի 97 (անշարժ գույքի գրանցման N 12122025-05-0053 վկայական), Վարդենիս քաղաքի Գայի փողոցի 80 (անշարժ գույքի գրանցման N 09012026-05-0009 վկայական) և Վարդենիս քաղաքի Գայի փողոցի 82 (անշարժ գույքի գրանցման N 28112025-05-0022 վկայական) հասցեներով անշարժ գույքերը միավորել և շնորհել Վարդենիս քաղաք Վ. Համբարձումյան փողոց 95-97 շինություն հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

...6թ. սեպտեմբերի 02
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 սեպտեմբերի 2026 թվականի N 0608-Ա

### ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարդենիս համայնքի ղեկավար Աhարոն Խաչատրյանս, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ կետով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Ընդերքի տեսչական մարմնի 03.08.2026 թ. N 01/30.5/2/5657-2026 գրությունը և ուսումնասիրելով 05 օգոստոսի 2026 թվականի N 0528-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ ***որոշում եմ.***

Հաշվի առնելով այն, որ «ԳՊՄ ԳՈԼԴ» ՍՊ ընկերության կողմից Սոթքի բաց հանքի տարածքում վարձակալած՝ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասում (2010 թվականի հունիսի 10-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և «ԳՊՄ ԳՈԼԴ» ՍՊ ընկերության միջև կնքված «Հողամասի վարձակալության N1» պայմանագիր) առանց նշված հողամասի նպատակային նշանակության փոփոխության տեղադրվել է քարջարդիչ տեխնիկա, և վարչական լսումների ընթացքում կատարված տեղազննության արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից հիշյալ տեխնիկան հեռացվել է գյուղատնտեսական նշանակության հողամասից, իսկ հետևանքները վերացվել են, այնուամենայնիվ նախկինում կատարված վարչական իրավախախտման համար ընկերությունը պատասխանատվությունից չի ազատվում, հետևաբար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի իմաստով այն գնահատվում է որպես իրավախախտում՝ մեղմացնող հանգամանքներով:

Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով մեղմացնող հանգամանքները՝

1.ԳՊՄ ԳՈԼԴ» ՍՊ ընկերությանը մեղավոր ճանաչել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման մեջ և նշանակել վարչական տույժ՝ տուգանք 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 02
ք. Վարդենիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 0609-Ա

## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-051-0036-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,04805 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ,ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 0548-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի ղեկավարի 13 օգոստոսի 2026 թվականի <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-051-0036-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,04805 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ,ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 0548-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը:

1.1 Որոշման վերնագրում, հիմքում 1-ին և 3-րդ կետերում՝ <<0,04805>> թվերը փոխարինել՝ <<0,22885>> թվերով:

1.2 Որոշման 2-րդ կետում՝ 77,80 քմ-ից հետո << և >> տառի փոխարեն լրացնել <<, (ստորակետ) բաց պատշգամբ՝ (բութ)>> բառերը և կետադրական նշանները:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 04
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 0610-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի» սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 18-րդ հոոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղաքունիքի մարզի Վարդենիս համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների 2026 թվականի հոկտեմբերի 25-ին կայանալիք ընտրություններն ու Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 20.08.2026 թվականի թիվ 286-Ա և 2022 թվականի մարտի 24-ի թիվ 17-Ն որոշումներն՝ **որոշում եմ.**

1.Վարդենիս համայնքի տարածքում՝ թիվ 21 ընտրատարածքում, ըստ հաջորդականության և համարակալման՝ կազմավորել թվով 39 /երեսունինը/ տեղամասային կենտրոն և հաստատել դրանց բնութագրերը՝ համաձայն հավելվածների:

2.Սույն որոշումն ուղարկել թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ և կազմավորված ընտրական տեղամասերի տարածքների տեղամասերը տնօրինող հաստատությունների պատասխանատուներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 04
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 0611-Ա

**ԱԻԴԱ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԹՈՌՆՈՒՀԻ՝ ԱՐՄԵՆ ԱՐՍԵՆԻ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 35-րդ և 37-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-իN 631-Ն որոշումը և Վարդենիսի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 26.08.2026 թվականի ստի թիվ 4 արձանագրության 6-րդ կետը՝ **որոշում եմ.**

Աիդա Տեր-Գրիգորյանին նշանակել.

1. Հոգաբարձու՝ Արմեն Արսենի Տեր-Գրիգորյանի /ծնված՝ 15.01.2013թ./ նկատմամբ:

2. Սույն որոշումը համարվում է ընդունված ստորագրության պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 04
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 0612-Ա

### ՀԱՅԿՈՒՇ ԲԱԳՐԱՏԻ ԱԾԱՏՈՒՐՈՎԱՅԻՆ ԻՐ ՈՐԴՈՒ՝ ԱՐՄԵՆ ՆՎԵՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆ/ ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2 հունիսի 2016 թվականի N 631-Ա որոշումը և Վարդենիսի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 26.08.2026 թվականի նիստի [illegible] 4 արձանագրության 5-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. Հայկուշ Բագրատի Ածատուրովային նշանակել պատրոն/օգնական/ Արմեն Նվերի Մանուկյանի նկատմամբ:

2. Պարտավորեցնել Հայկուշ Բագրատի Ածատուրովային անհրաժեշտ օգնություն ցուցաբերել Արմեն Նվերի Մանուկյանի նկատմամբ, հոգ տանել նրա առողջության մասին և Արմեն Նվերի Մանուկյանի համաձայնությամբ իրականացնել նրա ապրուստի, կենցաղային կարիքների բավարարմանն ուղղված կենցաղային և այլ գործարքներ, պաշտպանել նրա իրավունքներն ու շահերը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 04
ք. Վարդենիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
## ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 0613-Ա

### ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԳՈՐԾԱՐՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Վարդենիսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 26.08.2026թ. նիստի [illegible]վ 4 արձանագրության 4-րդ կետը **որոշում եմ.**

1. Թույլատրել օրինական ներկայացուցիչ Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի բնակիչ Ռուզաննա Կարենի Հովհաննեսյանին իր անչափահաս երեխաներ Մաքս Հայկի Ծատուրյանին /ծնվ.՝ 19.01.2016թ./, Պետրոս Հայկի Ծատուրյանին /ծնվ.՝ 12.12.2012թ./ համասեփականության իրավունքով պատկանող 37GE529 HYUNDAYI մակնիշի թեթև մարդատար ավտոմեքենայի վերաբերյալ գործարք կատարել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 04
ք. Վարդենիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 սեպտեմբերի 2026 թվականի N 0614-Ա

## ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Վարդենիսի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 26.08.2026թ. նիստի թիվ 4 ձանագրության 3-րդ կետը **որոշում եմ.**

1. Թույլատրել օրինական ներկայացուցիչ Վարդենիս քաղաքի բնակիչ Նարինե Հովհաննեսի Ղազարյանին վաճառելու իր անչափահաս երեխաներ Ավիկ Սուրենի Մնացականյանին /ծնվ.՝ 17.11.2011թ./, Արտյոմ Սուրենի Մնացականյանին /ծնվ.՝ 22.12.2014թ./ համասեփականության իրավունքով պատկանող 34NC283 LEXUS մակնիշի թեթև մարդատար ավտոմեքենան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. սեպտեմբերի 04
ք. Վարդենիս